

սառածը քիչ քիչ և մեղմաբար լուծե-
լով կրնայ բժշկուիլ, և ընդ հակա-
ռակն սառածին վրայ յանկարծական
ջերմութիւն մը զարնելով բոյսը իսկոյն
կը թուլանայ ու կը մարի: Եւ ըսածիս
տարացոյց, շատ անգամ տեսած եմք, որ
զարնանային եղեամով ծառոց կէս սա-
ռած մատղաշ ծայրերուն վրայ յանկար-
ծական ջերմ արեւ ծագելով, բոլորովին
ապականած են, և դարձեալ ուրիշ ան-
գամ այսպիսի սառոյցի վրայ օդը ամ-
պոտելով ամենը փրկուած են:

Սառոյցին ֆիսար կը տեսնուի նաև
տեղափոխութեան համար գետնէ հա-
նած ծառոց արմատներուն վրայ. քան-
զի արմատները յոյժ կակուղ ու ջրոտ
ըլլալուն համար ձմեռ ժամանակ քաղ-
քէ քաղաք ճանապարհորդելու ատեն
ցուրտէ կը զարնուին ու կը սառնին.
այսպիսի ցրտահար ծառերուն բժշկու-
թիւն մատուցանելու համար զով ծած-
քի տակ դնելէն ու արմատները յարդով
ծածկելէն ու թրջելէն ետքը, աստիճա-
նաբար բարեխառն օդի հանելու է, այն-
պէս որ սառոյցը քիչ քիչ ու մեղմով
լուծանի. իսկ եթէ ոք անհամբերաբար
յարեգդէմ կամ 'ի ջերմատուն կամ
կրակի դէմ դնելով ուղէ սառոյցը փա-
րատել, տարակոյս չունենայ որ առանց
մէկը փրկելու զամենքը կը կորուսանէ:

Դիրք. Դիրքը ըսելով կը հասկանամք
գետնի մը կեցած ու նայած երեսը նը-
կատմամբ կողմանց աշխարհի: Զոր օ-
րինակ երբ լեռանց ստորոտի վրայ կե-
ցած պարտէզին երեսը դէպ 'ի հարաւ
կը նայի, կ'ըսեմք թէ անոր դիրքը 'ի
հարաւ է կամ հարաւային դիրք ունի.
Երբ 'ի հիւսիս կը նայի, կ'ըսեմք թէ դիրքը
'ի հիւսիս է կամ հիւսիսային դիրք ու-
նի. դարձեալ արեւելեան և արեւմտեան
եթէ պարտէզը յարեւելք կամ յարեւ-
մուտք կը նայի: Նոյնպէս երբ պատի
մը երեսը 'ի հարաւ կը հայի՝ կ'ըսեմք
թէ հարաւային դիրք ունի, և այլն: Արդ
պտղադարման պարտիզպանի գործոց
յաջողելուն գլխաւոր պայմաններէն
մէկն ալ իւր պարտէզին դիրքն է:

Հարաւային դիրքը ամենէն աւելի

տաք կը համարուի, որովհետև արեգա-
կան ճառագայթները ուղղակի կ'ընդու-
նի և առաւօտէ մինչև յերեկոյ անարև
չմնար. իսկ հիւսիսային դիրքը պաղ-
քանզի գրեթէ արև չտեսնար: Արեւե-
լեան դիրքը հարաւէն պաղ է, և այն
կողմէն փշած հովերու պատճառաւ չոր:
Արեւմտեան դիրքն ալ հարաւէն աւելի
պաղ է, բայց հասարակօրէն շատ խո-
նաւ:

Յայտնի է որ ջերմութեան աստիճա-
նին այսչափ զանազանութիւնը չկրնար
ամեն ծառոց հաւասարապէս օգտամա-
տոյց ըլլալ: Եւ յիրաւի. քանզի շատ
տեսակ տանձ ու դեղձ կը ճանչնամք որ
հարաւ կը սիրեն, և այլք որ չկարենալով
հարաւային դիրքի ջերմութեան հան-
դուրժել, արևէ կը զարնուին ու կը թա-
փին, իսկ արեւելեան դիրքի վրայ ան-
ֆնաս մնալով շատ աղէկ կ'ապրին: Իսկ
այն սակաւ տեսակ պտղատուք որ հիւ-
սիսային դիրք կ'ախորժին, 'ի հարաւ դը-
րուելով բոլորովին կ'ոգեքաղին: Ըսած-
ներէս սա հետեանքը կ'ելլէ, որ պտղա-
դարման պարտիզպանը ոչ միայն ճանչ-
նալու է ընդհանրապէս ամեն ազգի
ծառոց պատշաճեալ դիրքը, այլ և ա-
մեն տեսակներուն առանձնաբար ա-
խորժած դիրքն ու ջերմութիւնը: Իւ-
րաքանչիւր ցեղից ու տեսակաց վրայ
խօսած ատեննիս այս բանիս վրայ դեռ
զուրցելիք կ'ունենամք:

Տարրաշուշակաւ յոռցկիք.

Պ. Հենրիկոս Բէյլիոյ երկրաչափը,
1867^ն աշխարհահանդիսին համար
գործատէրներէն խաւրուած լուցկեաց
կիրառութեանը վրայ տեղեկութիւն մը
տուած է քանի մը թուով, որով այս
նիւթիս կարևորութիւնը կը ցուցնէ:

Միջին հաշուով Գաղղիոյ մէջ մարդ
գլուխ օրը 6 հատ է գործածութիւնը,
այս թիւս հիմն առնելով կը գտնուի որ
Եւրոպայի բոլոր բնակչաց համար լուց-
կեաց ամեն տեսակէն եղած օրական

գործածութիւնը երկու հազար միլիոն է։
Իսկ Անգղիոյ մէջի սպառումը մէկ
օրուան մէջ մարդ զուլիս 8 հատ է,
Պելճիոյ մէջ 9։

Միայն Եւրոպայի լուցկեաց գործարաններուն համար տարուան մէջ 400,000 խորանարդ մէդը փայտ կ'երթայ։

Այս նիւթիս շինութեանը համար Եւրոպայի այլ և այլ գործարաններուն մէջի աշխատաւորաց թիւը յիսուն հազար է, և շինուած վաճառքին արժէքն է 250 միլիոն։

Այս հաշիւը շատ աւելի զարմանալի է, մտածելով որ լուցկեաց արուեստը 1832ն սկսած է. առաջուց արեթ կամ փոսփորական հրավառելիք կը գործածէին։ Արդի ժամանակիս մէջ փոսփորական լուցկին մեծ կատարելութեան հասցընողը կրկնաժանգի¹ կամ կապարային ազօդադի² գործածութիւնն է, առեւն մը տնկադի քլորային³ կը գործածէին, բայց աշխատութեան ժամանակ վտանգներ առաջ կու գային։

Փայտանիւթ լուցկեաց լաւագոյն տեսակը և միանգամայն դիւրագինն 'ի Գերմանիա է, օրինակի համար Վիէննա յիսուն հազարը կ'աժեն 35 քրայցէր, գրեթէ 6 դահեկան։

Մոմապատ լուցկիի հնարքը բոլորովին Գաղղիոյ արուեստն է, և ամեն աշխարհ կը տարածուի ու կը ծախուի մանր տուփերով։ Թէպէտ այս լուցկեաց գինը չափաւոր է բայց 'ի վերայ այս ամենայնի ժողովուրդը կրկինը կը վճարէ քան ինչ գնով որ կը վաճառէ գործատէրը. ասկէ յայտնի կ'իմացուի թէ գործարանէն մինչև ժողովրդեան ձեռքը հասնելու համար որչափ ձեռքէ կ'անցնին։

1 Bioxyde.

2 Azotate de plombé.

3 Chlorate de potasse.

Մանուկ։

Տեսայ երբեմն մանկիկը դաշտերու մէջ մշակի մը քով. — նորաբողբոջ ծաղիկ՝ հասուն հասկի մը քով. տղան մանրաքայլ ետէն կ'երթայ անհարթ ակօսներուն մէջէն. վայրկեան մը կանկ կ'առնու, խոտ մը կը փըրցունէ ու կը նետէ, զերդ թռչուն որ յօդս սլանալու ժամանակ ընդ հատ ընդ հատ կը գեղգեղէ, — խայտալից կարկաչիւն սրտի, — ու յետոյ ընթացքը աւելի կ'երագէ։ — Հայրը արօրին վրայ կորաքամակ մերթ ընդ մերթ գլուխը ետև կը դարձունէ ապա, հով ըլլալու համար թէ արդեօք տղան հոն է. առ ինքն կը կանչէ և գորովալից մը կը նայի անոր, և քովը եկած ժամանակը քաղցր մը կը ժպտի։ « Ի՛նչ բան է, կ'ըսեմ, այս զբօսանքը. աշխատաւորի մը համար տղան արգելք կամ մտացցրումն է »։ Վա՛յ անմտութեանս. ա. սիկայ ընդհակառակն ծածկեալ զօրութիւն մ'է, խրախոյս մը, ակնկալութիւն մը, յարատեւ նորոգութիւն մ'է. երկրաւ գործը փորած հողուն վրայ՝ ալ աւելի բողբոջելու պատրաստ հատիկ մը կը տեսնէ զտղան. այն է իր ատոք հասկը, իր առատ և հաճոյական հունձքը։ Ո՛հ, ինչ զարմանալի զգացմունք, ինչ քաղցր և խորհրդաւոր գաղտնիք այս երկու հասկացս մէջ. այն քրտնաթաթաւ ճակատը՝ տղան կը սրբէ. այն պարտասեալ բազուկները՝ տղան կը հանգչեցունէ. այն ճնշեալ հոգին՝ կը զարթուցանէ, կը սփոփէ, սիրոյ զեղմամբ կը լեցունէ. մինչդեռ մարդը հողուն մէջ ակօս մը կը պատռէ, տղան յանգէտս ուրիշ մը յերկինս կը բանայ. անհուն պատկերք և յաւիտենականութիւն կան 'ի մանուկն. երկնաւոր նորեկ պատգամաբեր զապա, գայն և զկեանս ինքնին մեզ կը յայտնէ. իրեն հետ մարդուն սիրտը առողջ է և անդադար կը ծաղկի։